Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
Երիտասարդ գիտաշխատողների հոդվածների ժողովածու
Национальная Академия наук Республики Армения, Сборник статей молодых научных сотрудников
National Academy of Sciences of Armenia, Collection of articles of the young researchers

Հասարակական գիտություններ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Общественные науки
1, 2001 (2)
ИСТОРИЯ

Humanitary Scien
HISTO

ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
(սկզբնավորումից մինչև 1924 թթ.)

Ավագյան Ք.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Առաջին սակավաթիվ անհատ հայերը Հյուսիսային Ամերիկա են ոտք դրել դեռևս XVII դ. սկզբին՝ անձնական դրդապատճառներով: Թուրքական կայսրությունում ամերիկյան քարոզիչների լուսավորչական գործունեությամբ 1834 թվականից սկսվել է հայերի կրթական, ապա տնտեսական նախապայմաններից դրդված ժամանակավոր բնույթ կրող պանդխտությունը, որը հայության նկատմամբ կազմակերպված պարբերական ջարդերի հետևանքով վեր է ածվել զանգվածային գաղթի՝ ընդգրկելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական անպահով կյանքի հեռանկարներից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի:

Авакян К. **Эмиграция армян В Соединенные Штаты Америки (от начала до 1924г.).** Армяне появились в Северной Америке еще в XVII[т] веке. Вследствие просветительской деятельности американских миссионеров в османской Турции с 1834 года в США начинает прибывать первый поток армян-студентов для обучения в высших учебных заведениях современным наукам, с тем, чтобы, возвратившись, служить Родине. Обретя свободу и процветание в экономической, политической, культурной и религиозной жизни, армяне постепенно обосновываются на новой гостеприимной земле, вдохновляя последующий поток эмигрантов-армян в США. Периодические массовые истребления армян в Османской империи в конце XIX-начале XX веков по существу превратили единичный поток в США в массовую эмиграцию. Таким образом, с 1834 по 1924 годы в США эмигрировало около 100 тысяч, а уже в 1924 году там проживало более 125 тысяч армян.

Avakian K. **The Emigration of the Armenians to the United States of America (from the Beginning to 1924).** Armenians emigrated to the U.S.A., due to individual, educational, economic, political, cultural, religious and other reasons. Historically reliable documents reveal that even at the beginning of the 17th century some Armenians were among the very first European settlers to North America (in 1618 the first Armenian, John Martin, set foot in the newly formed American Virginia Colony and become a tobacco-dealer). The main removal of Armenians to the U.S. began after the first half of the 19th century as a result of the illuminative activities of the American Protestant missionaries in Ottoman Turkey, stimulating the educational (in 1834 Khachatoor Oscanian, the first Armenian student, went to the U.S.) and later economic exodus of the Armenians to the New World. As a result of continuous violence, massacres, slaughters and Genocide against the Armenians in Ottoman Turkey (1894-1896, 1909, 1915, 1920-1922), the former individual, educational and economic emigration turned into a mass emigration with political, religious and cultural reasons. Political inconstancy and the crisis situation in the Ottoman Turkey and Czarist Russia after the First World War, as well as the loose of faith upon the alien powers, destroyed the sacred dream of returning to their Homeland for numerous emigrants and finally established them in the adopted New Land.

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքներից ելնելով:

Պատմական հավաստի փաստաթղթերից պարզ է դառնում, որ դեռևս XVII դ. սկզբից Եվրոպայից դեպի Հյուսիսային Ամերիկա ուղևորված վերաբնակիչների թվում էին նաև առաջին սակավաթիվ անհատ հայերը: Այսպես, 1618 թ. ամերիկյան նորաստեղծ Վիրջինիայի գաղութ է ոտք դրել Ամերիկայում առաջին հայը՝ պարսկահպատակ Ջոն Մարտինը, որը զբաղվել է ծխախոտագործությամբ, ապա՝ 1653թ. Զմյուռնիայից հրավիրվել են երկու հայեր՝ վերականգնելու անհաջողության մատնված Վիրջինիայի գաղութի շերամաբուծությունը և իրենց հմտությունները հաղորդելու տեղաբնիկներին: Նրանցից մեկը հիշատակվում է որպես Ջորջ Հայ:

Հետագա տարիներին Ամերիկա մեկնած հայերի մասին պահպանվել են շատ սակավ, հասախ՝ ենթադրական տեղեկություններ: XVII-XVIII դդ. ընդգրկող այդ ժամանակաշրջանում հայերը հիմնականում ժամանել են Մեծ Բրիտանիայի հետ առավել գործուն հարաբերություններ ունեցող եվրոպական որոշ երկրներից (հատկապես՝ Հոլանդիայից), ինչպես նաև՝ Հնդկաստանից, և վերաբնակվել ամերիկյան նորաստեղծ տարբեր գաղութներում (Վիրջինիա, Մասսաչուսեթս, Հարավային Կարոլինա, Ջորջիա): Այսպես, 1682թ. Մասսաչուսեթսում հաստատվել է առաջին հայը՝ ծագումով հունգարահայ գիտնական Ստեփան Զաղորին (հավանաբար՝ հայկական Զաղուրյան, Ասատուրյան կամ Աստվածատուրյան ազգանունների տարբերակը), 1719թ. Հարավային Կարոլինայում՝ հոլանդական Արժանապատիվ Փիթըր Թուսքյանը (հավանաբար՝ Պետրոս Դուստրյան) և նրա թեմի անդամ Ջեյքըբ Սաղուրին (հավանաբար՝ հայկական Հակոբ Սաղուրյան, կամ Ասատուրյան, կամ Աստվածատուրյան ազգանուններից), 1738թ. Ջորջիայում հիշատակվում է հողագործ Ստեփան Թարդյանը (կամ՝ Թերյեն, Թարդյեն, հավանաբար՝ Տերյան) [1]:

Սակայն պատմական տվյալ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին հայերով չի պայմանավորվել հետագա տարիներին հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակաուղղված տեղաշարժը. նրանք սոսկ գաղթականության հիմնական հոսքից դուրս գտնվող անհատներ էին:

Այսպիսով, բրիտանական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ հայերի մասին մեզ հասած կցկտուր տեղեկություններից պարզ է դառնում, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական հանգամանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում ցրված հայեր էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք, առևտրական և այլ հանգամանքների բերումով առնչվելով Մեծ Բրի-

տանիայի հետ, միմյանցից տարբեր, հիմնականում անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակեցվող գաղութ և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում:

Բրիտանական գաղութատիրության տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ ընդհուպ մինչև 1820թ. նորեկների, այդ թվում նաև հայերի, գրանցման վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել:

Նշենք, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին հայերով չի պայմանավորվել հետագա տարիներին հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակաուղղված տեղաշարժը. նրանք սոսկ գաղթականության հիմնական հոսքից դուրս գտնվող անհատներ էին:

Հետագայում՝ XIX դ. առաջին կեսից սկսվել է հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս ամերիկյան բողոքական քարոզիչների օսմանյան Թուրքիայում ծավալած կրթալուսավորական գործունեության: Օտար Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը (American Board of Commissioners for Foreign Missions), որի նպատակն էր «Աւետարանը տարածել ի սփիւռս աշխարհի», 1831թ. Կ.Պոլսի Բերեքի թաղամասում հիմնած Հայկական Առաքելության միջոցով կառուցել է ավետարանական եկեղեցիներ, դպրոցներ, քոլեջներ, որտեղ եվրոպական և ամերիկյան կրթական մակարդակի դասընթացներ են իրականացվել: Հիշատակման են արժանի Ռոբերտ քոլեջը (1862 թ., Կ.Պոլիս), Ամերիկյան համալսարանը (1864 թ., Բեյրութ), Կ.Պոլսի աղջկանց քոլեջը (1873թ., Կ.Պոլիս), Կենտրոնական Թուրքիայի քոլեջը (1876թ., Այնթապ), Եփրատ քոլեջը (1878թ., Խարբերդ), Կենտրոնական Թուրքիայի աղջկանց քոլեջը (1882 թ., Մարաշ), Անատոլիա քոլեջը (1836թ., Մարզվան), Սրբ.Պողոսի հաստատությունը (1888 թ., Տարսոն) և այլն: Ամերիկյան գաղափարների «խաղաղ թափանցումին կերպը» հանդիսացող այդ հաստատությունները մեծապես նպաստել են նաև հայ ուսանողների արևմտամետ աշխարհայացքի ձևավորմանը: Միաժամանակ, անժխտելի է ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած լուսավորական գործունեության նշանակությունը Օսմանյան կայսրության դարավոր հետամնացության և նահապետական բարքերի գերիշխանության պայմաններում խարխսիող հայության ազգային հոգեգիտակցական զարթոնքի գործում [2]:

Հայ բնակչության շրջանում հիմնականում դրական ընդունելություն գտած ամերիկյան քարոզիչների իրականացրած ավետարանական քարոզներն ու հաղորդած գիտելիքները, ինչպես նաև Նոր Աշխարհի վերաբերյալ ոգեշնչող զրույցները չէին կարող անտարբեր թողնել հոգևոր արթնացում ապրող ուսումնատենչ հայ երիտասարդությանը, որը հաճախելով ամերիկյան դպրոցներ ու քոլեջներ, աստիճանաբար իր հայացքը հառել է դեպի օվկիանոսից այն կողմում գտնվող ազատության և լայն հնարավորությունների երկիրը՝ տեղի բարձրագույն կրթարաններում ժամանակակից մասնագիտություններ (հիմնականում՝ ատամնաբանություն, բժշկություն, տեխնիկա) ուսանելու և, վերադառնալով, իր գիտելիքներն ի նպաստ ազգին ծառայեցնելու համար:

Ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ 1834 թ. դեպի ԱՄՆ հայ ուսանողների շարժման սկզբնավորողը Կ. Պոլսի միսիոներական դպրոցի սան տասնվեցամյա Խաչատուր Ոսկանյանն էր, որը, ավարտելով Նյու Յորքի համալսարանը, դարձել էր ճանաչված լրագրող ամերիկյան և հայ մամուլում: Նա, լինելով առաջին հայ մտավորականն ԱՄՆ-ում և ծավալելով ազգանպաստ գործունեություն, անգլերեն հրատարակել է «Սուլթանն ու իր ժողովուրդը» գիրքը, ամերիկյան հասարակությանը ծանոթացնելով հայոց պատմությանն ու մշակույթին, նաև՝ զբաղեցրել բազմաթիվ պաշտոններ ամերիկյան տարբեր հաստատություններում (Նյու Յորքի մաքսատան գրագիր, Կոլումբիայի համալսարանի իրավագիտության գրադարանի վարիչ, Նյու Յորքի Սամուլի ակումբի անդամ, ապա՝ նախագահ, Նյու Յորքում օսմանյան Թուրքիայի հյուպատոս) [3]:

Քանի որ ամերիկյան քարոզիչների սկզբնական գործունեությունը սահմանափակված էր Կ.Պոլսով և շրջակա տարածքներով, հետևաբար շուրջ քսան տարիների ընթացքում ԱՄՆ մեկնած մեկ տասնյակից ավելի վերոհիշյալ առաջին հայ ուսանողները պոլսեցիներ էին, որոնք հիմնականում մասնագիտացել էին աստվածաբանության ու բժշկության, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերում: Նրանց համար ԱՄՆ-ը «կեանքի հանգրուան մը միայն եղած է, աշակերտութեան շրջան մը», որից հետո շատերը հիմնականում վերադարձել են հայրենի երկիր:

Ամերիկյան քարոզիչներն օսմանյան Թուրքիայի հայության կրթական համակարգը ժամանակակից նոր հիմքերի վրա դնելուց բացի պակաս ջանք չեն գործադրել նաև արհեստավորների հմտությունները կատարելագործելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու միջոցով արգելակել երկրից հայերի աստիճանաբար աճող արտահոսքը: Այդ խնդրում մեծ ու անգնահատելի դեր է կատարել հանրահայտ քարոզիչ, Ռոբերտ քոլեջի հիմնադիր Միրուս Հեմլինը՝ դպրոցներին կից բացելով ժամանակակից արտադրության մեթոդներն ուսուցանող տարբեր արհեստանոցներ: Նա գտնում էր, որ «այս աշխատասէր ժողովուրդը իր երկրին մէջ պահելու միակ միջոցը արհեստ ուսանելն է, հետեւաբար ուման հետ արհեստն ալ սովորեցընելու է անոր» [4]:

Միևնույն ժամանակ, քարոզիչները մեծ մասամբ շահագրգռված ու մտահոգված էին ամերիկյան բարձրագույն հաստատություններում առաջնակարգ կրթություն ստացած հայ երիտասարդության հայրենիք վերադարձով՝ նրանց համարելով Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում նորանոր սերունդներ լուսավորելու իրենց գործունեության հետևորդներ: Ուստի, շատ հաճախ խոչընդոտներ են հարուցել ուսանողների արտահոսքը կանխելու նպատակով՝ հրաժարվել են անգլերեն ուսուցանել և կամ՝ արգելել Միացյալ Նահանգներ մեկնելը [5]:

Այնուամենայնիվ, հակառակ գործադրված միջոցների, հայերի հոսքն Ամերիկա չի դադարել: Տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարները, ինչպես նաև նոր երկրում իրենց հայրենակիցների հաստատող վիճակը ոգևորել են ոչ միայն հայ ուսանողներին, այլ, սկսած XIX դ. 50-ական թվականներից, նաև՝ արհեստավորներին ու վաճառականներին: Նրանց մեծ մասը շուտով վերադարձել է իր ծննդավայրը, իսկ ոմանք, հանդիպելով բարենպաստ պայմանների, հաստատվել են այնտեղ և, չխզելով կապը հայրենի երկրի հետ, երբեմն

առևտրական հարաբերություններ հաստատել, նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերել հայրենակիցներին, ինչպես նաև նպաստել իրենց ընտանիքների եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքի բարեկարգմանը:

XIX դ. երկրորդ կեսին, հատկապես երկրի միավորման համար մղված Քաղաքացիական (1861-1865 թթ.) պատերազմից հետո, ԱՄՆ-ում սկսված տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի վերածնունդը, ինչպես նաև 1876 թ. օսմանյան Թուրքիայում սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությամբ և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը, խթանել են հայերի հետագա արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից՝ ընդգրկելով ոչ միայն ուսանողների, արհեստավորների ու վաճառականների, այլև՝ ծանր հարկերի տակ կքած գյուղացիների և ունեզուրկ գործավորների, ազատ աշխատանք որոնողների, ինչպես նաև՝ միջին կարգի մի շարք առևտրականների: Նրանց մեծ մասը, մտադրություն չունենալով հաստատվել այնտեղ, ձգտել է ժամանակավորապես աշխատելուց և որոշ գումար ձեռք բերելուց հետո վերադառնալ հայրենի բնակավայրեր՝ բարելավելու իրենց ընտանիքի նյութական վիճակը: Ընդհանուր առմամբ, 1850-1870 թթ. ԱՄՆ-ում կար ավելի քան 55 հայ, իսկ 1870-ական թվականների սկզբին նրանց թիվը հասել էր 70-ի [6]:

XIX դ. 80-ական թվականներից Օսմանյան Թուրքիայի գրեթե բոլոր խոշոր կենտրոններում ամերիկյան ավետարանական քարոզիչների կրթալուսավորական գործունեության (եկեղեցիների, նախնական ու բարձրագույն դպրոցների, քոլեջների և մշակութային այլ օջախների ստեղծում) ծավալման ու խորացման հետևանքով աճել է հայ, հիմնականում՝ ամուրի (95%), երիտասարդների արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից, գերազանցապես Խարբերդից (40%): Եվրոպական շուկաներում արդեն իսկ իրենց գործունեությունը ծավալած հայ հարուստ վաճառականները ձեռնպահ էին մնում ԱՄՆ ներթափանցելուց: 1880-ական թվականների վերջերին արդեն 1.500 հայ ունեցող ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ հայ հեղափոխական կուսակցական (հնչակյան, դաշնակցական) գործիչների համար, որոնք, այդտեղ հպատակագրվելով որպես ամերիկյան քաղաքացիներ, անարգել մուտք են գործել Թուրքիա և հեղափոխական գործունեություն ծավալել հայերի շրջանում: Ահա թե ինչու, թուրքական պետությունը, որը մինչ այդ որոշակի ընդգրկված քաղաքականություն չուներ ԱՄՆ մեկնող հայերի նկատմամբ, շուտով, դրսից ներթափանցող հեղափոխական վտանգից խուսափելու նպատակով, պարբերաբար սահմանափակումներ է մտցրել, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես արգելել հայերի գաղթն Ամերիկա [7]:

Արդյունքում՝ անցյալ դարավերջին «բախտ որոնելու եկած» պանդուխտ հայերը, մշտական բնակություն հաստատելով ԱՄՆ-ում, աստիճանաբար երկրի հյուսիսարևելյան նահանգներից տարածվել են դեպի միջին և արևմտյան նահանգներ, արդեն XX դ. առաջին տասնամյակներին հայաբնակ դարձնելով լայնածավալ ողջ երկրի գրեթե յուրաքանչյուր տարածք: Ամերիկյան կյանքին ընտելացած հաջողակ, կրթված ու գործարար հայերը պայմաններ են նախապատրաստել հետագա տասնամյակներին պատմական ստիպողական հանգամանքների բերումով գաղթի դիմած հազարավոր հայրենակիցներին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու, ինչպես նաև համախմբելու և որպես համայնք կազմակերպելու ուղղությամբ:

Մինչև 1899 թ. ԱՄՆ մեկնած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ 1820-1898 թթ. ԱՄՆ մուտք գործած բոլոր գաղթականները համապատասխան գրասենյակի կողմից գրանցվել են ոչ թե ըստ ազգային պատկանելության, այլ՝ ըստ աշխարհագրական ծագման բնակավայրերի, այսինքն՝ համաձայն իրենց գաղթած երկրների: Ընդ որում, օսմանյան Թուրքիայից գաղթածները մինչև 1868 թ. գրանցվել են որպես «Եվրոպական Թուրքիայից», իսկ 1869 թվականից՝ նաև «Ասիական Թուրքիայից» և «Հայաստանից» եկածներ: Հետևաբար, տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի թիվը խիստ հարաբերական է: Միայն 1899 թվականից է, որ գաղթականները սկսել են գրանցվել ըստ իրենց ազգային պատկանելության, դրանով իսկ որոշակի դարձնելով ԱՄՆ գաղթած հայերի թիվը [8]:

Ի հետևանս XIX դ. 90-ական թվականներից օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ու կոտորածների, նախկինում դեպի ԱՄՆ մեկնած հայերի անհատական հոսքը վեր է ածվել քաղաքական ու կրոնական դրդապատճառներ ունեցող, մեծ չափերի հասած զանգվածային գաղթի՝ ներառելով ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափող կայսրության ողջ հայաբնակ շրջանների (Խարբերդ, Սվազ, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Կիլիկիա և այլն) հայությանը (մեծ թիվ են կազմել հողամշակները, քաղաքների ու ավանների արհեստավորներն ու բանվորները):

Այսպիսով, 1834-1894 թթ. ԱՄՆ են մեկնել շուրջ 4.000 հայեր, որոնք կազմել են տվյալ ժամանակահատվածում օսմանյան Թուրքիայից Ամերիկա մեկնած գաղթականների ընդհանուր թվի (9.472 մարդ) կեսից ավելին: Եթե սրանից հանենք նաև այդ ընթացքում հայրենի բնակավայրեր վերադարձած մոտավորապես 1.000 հայերին, ապա 1894 թ. արդեն ԱՄՆ-ում կար շուրջ 3.000 հայ, որոնք հիմնականում հաստատվել էին Նյու Յորքում, Ուորքեսթերում, Լինում, Բոստոնում, Փրովիդենսում, Հարթֆորդում, Ֆիլադելֆիայում, Հոբոքենում, Թրոյում, Չիկագոյում, Ֆրեզնոյում և այլուր:

Ամերիկյան Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալներով, եթե մինչև 1894 թ. «Ասիական Թուրքիայից» եկածների թիվը խիստ նվազ էր, ապա 1895-1898 թթ. նրանց թիվը կտրուկ կերպով աճել է՝ կազմելով շուրջ 15.913 մարդ: Միաժամանակ, կասկածից վեր է, որ տվյալ ժամանակահատվածում նշված տարածքից մեկնած գաղթականների գերակշռող մասը՝ ավելի քան 10.000 մարդ, համիդյան ջարդերից ճողոպրած հայեր էին: Արդեն 1900 թ. ԱՄՆ-ում կար 15.000-20.000 հայ, իսկ որոշ տվյալների համաձայն՝ նույնիսկ 25.000 [9]:

1904թ. ԱՄՆ-ը հանգրվան է դարձել նաև Ռուսական կայսրությունից տնտեսական, ապա քաղաքական հանգամանքների բերումով մեկնած հայերի համար, որոնք Նոր Երկրի մասին տեղեկացել էին XIX դ. կրոնական հալածանքների բերումով Կովկաս աքսորված դուխոբորներից ու մոլոկաններից: ԱՄՆ մեկնած արևելահայ

պանդխտության նախակարապետները Կարսի Ղարաղալա գյուղից Մուշեղյաններն էին, որոնց շուտով հետևել է գյուղի գրեթե ողջ բնակչությունը: Դարասկզբին Ռուսական կայսրությունում և Կովկասում տիրող տնտեսական ու քաղաքական ճգնաժամն ընդլայնել է արևելահայության տեղաշարժը դեպի օտար ափեր՝ ներառելով նաև Ալեքսանդրապոլի հարակից գյուղերից, Իգդիրից, Կողբից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից մեկնած հայերի: Նրանք հիմնականում բնակություն են հաստատել ԱՄՆ-ի արևմտյան ափին՝ Կալիֆորնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում: Դարասկզբին առավել մեծ չափերի հասած արևելահայերի արտահոսքը (շուրջ 2.500 մարդ) նվազել է Առաջին աշխարհամարտի տարիներին, ապա չնչին չափով նորից ավելացել ռուսական պետությունում 1917 թ. ստեղծված քաղաքական խառնաշփոթ իրավիճակի հետևանքով: Արևելահայերի հոսքը ԱՄՆ, ի տարբերություն արևմտահայերի, մեծ չափերի չի հասել, ինչը բացատրվում է Ռուսաստանում առկա առավել նվազ հալածանքներով ու տնտեսական համեմատաբար բարվոք վիճակով: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի Գաղթականական գրասենյակի տվյալներով, 1899-1924 թթ. կայսերական Ռուսաստանից ԱՄՆ էր մեկնել ավելի քան 3.500 հայ [10]:

1908թ. օսմանյան Թուրքիայում «դեմոկրատական ազատություններ» հռչակած երիտթուրքերի իշխանության գալով որոշ չափով նվազել, սակայն չի դադարել հայերի գաղթը ԱՄՆ, որը կրկին մեծ չափեր է ընդունել մեկ տարի անց՝ Ադանայի կոտորածների հետևանքով, երբ կյանքի, գույքի և ազատության նկատմամբ անորոշությունն ու անապահովությունը գաղթականության են մղել ոչ միայն կիլիկիահայությանը, այլև՝ ֆիզիկական բնաջնջման սարսափն իրենց աչքի առաջ ունեցող Օսմանյան կայսրության գրեթե բոլոր շրջանների հայերին: Ընդհանուր առմամբ, 1899-1914 թթ. ԱՄՆ գաղթած հայերի թիվը կազմել է 51.950 մարդ, ընդ որում գերակշռել են ընտանիքները հայրենիքում թողածները՝ 50% և ամուրիները՝ 37 %, իսկ ընտանիքով եկածները՝ 13 %:

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական սահմանադրությամբ վերացված գաղթի նկատմամբ արգելքի վերականգնման պայմաններում քիչ թվով հայերի է հաջողվել արտագաղթել: Այսպես, եթե միայն 1914 թ. ԱՄՆ էր գաղթել 7.785 հայ, ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ կերպով նվազել է՝ 1915-1919 թթ. կազմելով ընդամենը 3.620 մարդ, որոնք հիմնականում Մեծ եղեռնից վերապրողներ էին՝ հարազատներին կորցրած, մասնատված ընտանիքներ, որքեր: Արդեն պատերազմի ավարտին ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ [11]:

Օսմանյան Թուրքիայում հայերի պարբերական ջարդերով ու տեղահանություններով ուղեկցված քեմալական շարժման վերելքը, ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920 թթ.) անկումը, նոր թափ են հաղորդել դեպի ԱՄՆ իրականացվող հայ գաղթականությանը՝ 1921 թ. նախորդ տարիների համեմատ այն հասցնելով ամենաբարձր ցուցանիշի՝ 10.212. նրանք հայկական և ամերիկյան բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև ամերիկյան քարոզիչների կողմից թուրքական հարեմներից, ոչ քրիստոնյա ընտանիքներից, ճամբարներից ու որբանոցներից հավաքագրված հայեր էին: Ընդ որում, եթե մինչև 1919 թ. ԱՄՆ գաղթած հայերի զգալի մասը՝ շուրջ 76%-ը, տղամարդիկ էին և միայն 24%-ը՝ կանայք, ապա 1921 թվականից՝ ընդհակառակը՝ աճել էր կանանց թիվը և նվազել՝ տղամարդկանցը: Գաղթականները հիմնականում 16-45 տարեկան էին և մեկնել էին ընտանիքների հետ վերամիավորվելու նպատակով: Կանայք կազմել են 52%, տղամարդիկ՝ 27%, երեխաները՝ 21% [12]:

Առաջին աշխարհամարտի հետևանքով միջազգային ասպարեզում ստեղծված քաղաքական որակապես նոր հարաբերությունները պատճառ են դարձել ամերիկյան գաղթականական օրենքների պարբերաբար վերանայման, ինչը խիստ սահմանափակել է նաև հայերի գաղթը: Այսպես՝ 1921 թ. Առաջին Քվոտայի Օրենքով տարեկան Միացյալ Նահանգներ կարող էր գաղթել շուրջ 350.000 մարդ, ընդ որում, միայն 2.757 հայ: Դա 1910 թ. մարդահամարի համաձայն ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար կազմում էր 3% բաժին: Միաժամանակ, որպես մարդասիրական նպատակներով կատարված բացառություն, Մերձավոր Արևելքում դեգերող գաղթական հայերի համար Միացյալ Նահանգների իշխանությունների կողմից լրացուցիչ կերպով հատկացվել է որոշակի հավելյալ բաժին: Սահմանագծային էր 1924 թ. Ազգային Ծագումների Քվոտայի Օրենքը, որով նորից է կրճատվել ԱՄՆ մուտք գործել ցանկացողների թիվը՝ տարեկան կազմելով ընդամենը 150.000 մարդ, այսինքն՝ 1920թ. մարդահամարի տվյալներով ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար 2% բաժին: Ըստ այդ օրենքի, Հայաստանից տարեկան ԱՄՆ կարող էր գաղթել ընդամենը 124 հայ: Միաժամանակ, հայերը մեկնել են նաև իրենց բնակված երկրներին հատկացված բաժիններով: Վերացվել էր հայ որբերին ու փախստականներին բացառության կարգով մուտքի արտոնություն շնորհելու որոշումը: Այսուհետև նրանք գաղթելու էին Ազգերի լիգային պատկանող նանսենյան անձնագրերով: 1914-1924 թթ. ԱՄՆ է գաղթել 32.064 հայ՝ 1924 թ. ԱՄՆ-ում բնակվող հայության ընդհանուր թիվը հասցնելով ավելի քան 125.000 [13]:

Ընդհանուր առմամբ, Ն. Մանկունու և Ռ. Միրաքի հաշվարկների համաձայն, Նոր Երկիր առաջին հայի ոտնադրումից (1618 թ.) մինչև Ազգային Ծագումների Քվոտայի Օրենքը (1924 թ.), այսինքն՝ ավելի քան 300 տարիների ընթացքում, ԱՄՆ էր մուտք գործել շուրջ 141.229 հայ, իսկ ամերիկյան բողոքական քարոզիչների ազդեցությամբ դեպի ԱՄՆ սկզբնավորված հայերի պանդխտության պահից (1834-1924 թթ.), այսինքն՝ 90 տարիների ընթացքում, շուրջ 90.229 հայ [14]:

Այսպիսով, սկզբնական շրջանում կրթական ու տնտեսական պայմաններից դրդված պանդուխտ հայերի դեպի ԱՄՆ ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժը օսմանյան Թուրքիայում հայության նկատմամբ կազմակերպված պարբերական ջարդերի (1894-1896թթ., 1909թ., 1915թ., 1920-1922թթ.) հետևանքով աստիճանաբար վեր է ածվել զանգվածային գաղթի, ընդգրկելով տնտեսական, քաղաքական մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի: Առաջին աշխարհամարտի հետևանքով օսմանյան Թուրքիայում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տերությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստը ի չիք են

դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած, բազմահազար հայերի երազանքը՝ նրանց վերջնականապես ամրացնելով որդեգրած Նոր Երկրին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] *Malcom V.M.* The Armenians in America. Boston, Chicago, 1919, pp. 52, 56-57. J.H.Tashjian. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, pp. 3, 7-12. V.Wertsman. The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book. New York, 1978, p. 1.

[2] *Ճիզմէճեան Մ.Գ.* Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրէզնո, 1955, էջ 103: Ճակատագրական դէպքեր հայ պատմութեան մէջ, ա.տ., ա.թ., էջ 83:

[3] *Tashjian J.H.*, նշվ. աշխ., էջ 13-14: Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 16-18:

[4] *Մուշեղ Եպիսկոպոս*, նշվ. աշխ., էջ 27, 30:

[5] *Mirak R.* Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, p. 37.

[6] *Մուշեղ Եպիսկոպոս*, նշվ. աշխ., էջ 26, 28: Mirak R., նշվ. աշխ., էջ 36, 40:

[7] *Մուշեղ Եպիսկոպոս*, նշվ. աշխ., էջ 211: Մանկունի Ն.Լ., Ամերիկահայ գաղութի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, թիվ 1, էջ 104: Mirak R., նշվ. աշխ., էջ 42, 43:

[8] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., էջ 95: R.Mirak, նշվ. աշխ., էջ 288: Malcom V.M., նշվ. աշխ., էջ 66:

[9] *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 64-66, 76: The Armenian Image in History and Literature, ed. Hovannisian R., Malibu. 1981, p. 255: Մանկունի Ն.Լ., Ամերիկահայ մարդահամարը (Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Վենետիկ, 1926, էջ 586): Mirak R., նշվ. աշխ., 1983, էջ 46, 47, 290: Malcom V.M., նշվ. աշխ., էջ 65, 66:

[10] *Mirak R.* Armenians (Harvard Encyclopedia of American Ethnic Groups, ed. S.Thernstrom. Cambridge, London, 1981, p. 139). Mirak R., նշվ. աշխ, էջ 49, 57-58: Գալօեան Ս., Շիրակի հայերի գաղթը դէպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 65, 72, 58, 76, 101: Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 586:

[11] *Malcom V.M.*, նշվ. աշխ., էջ 65: Արշալոյս պատկերազարդ տարեգիրք, Ա տարի, Ֆրեզնո, 1922, էջ 47: Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585: The Armenian Image in History and Literature, էջ 255:

[12] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., 1926, էջ 585: Harvard Encyclopedia of American Ethnic Groups, էջ 139:

[13] *Danilov D.P.* Immigrating to the U.S.A. Canada, 1983, p. XVIII. A.S.Yeretzian. A History of Armenian Immigration to America with Special Reference to condition in Los Angeles. A Thesis. California, 1923, p. 18. Մանկունի Ն.Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585, 589: Harvard Encyclopedia of American Ethnic Groups, էջ 139:

[14] *Մանկունի Ն.Լ.*, նշվ. աշխ., 1926, էջ 589: Mirak R., նշվ. աշխ., 1983, էջ 290:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ 1915-1916թթ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Մարուքյան Ա.

ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Маркян А. **Россия и геноцид армян 1915-1916гг.: Политические подходы и позиции.** Политика России во время геноцида армян в 1915-1916гг. не была однозначнаё она имела колебания и зигзаги. Это объяснялось политической борьбой двух противостоящих течений в правительстве России: армянофильской и армянофобской. Политика России определялась в зависимости от того какое из этих течений одерживало победу в определенном историческом отрезке времени.

Maroukian A. **Russia and Armenian Genocide of 1915-1916. Political Approaches and Positions.** The policy of Russia during the Armenian genocide in 1915-1916 was not simple; it had many oscillations and zigzags. It was explained of political fighting of two tendencies in Russian government: proarmenian and antiarmenian. The policy of Russia was depended on victory of one of these tendencies in the definite historical time.

Բավական երկար ժամանակ ընդունված էր այն տեսակետը, որ Հայոց Ցեղասպանության հարցում Ռուսաստանի դիրքորոշումը եղել է կամ հայանպաստ, կամ հակահայկական: Այնինչ Ռուսաստանի քաղաքականությունը Մեծ եղեռնի տարիներին չի սահմանափակվել լոկ նշված ձևակերպումներով, քանզի ռուսական դիրքորոշումը 1915-1916թթ. Հայկական հարցում կրել է տատանողական բնույթ: Դրանք արդյունք էին այն պայքարի, որն ընթանում էր Ռուսաստանի տարբեր պետական գերատեսչությունների միջև Հայկական հարցի շուրջ: Պայքարի առանցքում ընկած էր հայերին վստահել-չվստահելու հարցը: Գերատեսչությունների պայքարում առանձնացել են երկու հոսանք՝

1. Հայանպաստ հոսանքը գտնում էր, որ հայերը արժանի են վստահության, քանի որ միշտ հավատարիմ են եղել Ռուսաստանին, ուստի նրանց շահերն ու ցանկությունները անպայման պետք է հաշվի առնել, քանի որ դրանք բխում են նաև Ռուսաստանի պետական շահերից:

2. Հակահայկական հոսանքը նշում էր, որ չպետք է վստահել հայերին, քանզի կարող է կրկնվել Բուլղարիայի նախադեպը, և հայերը երես կթեքեն Ռուսաստանից, ուստի Հայկական հարցը պետք է լուծել միայն ելնելով Ռուսաստանի ծավալապաշտական նպատակներից:

Ժամանակակիցների վկայությամբ Նիկոլայ II-ը կամքից թույլ անձնավորություն էր և կարծիք կար, որ նա որոշումներ էր ընդունում այս կամ այն գործչի ազդեցության տակ: Ցարը իր տեսակետները փոխում էր սարսափելի արագությամբ [1]:

Մասնավորապես Հայկական հարցում Նիկոլայ II-ը ընկնում էր մեկ հայանպաստ, մեկ հակահայկական հոսանքների ազդեցության տակ: Ըստ էության, Հայկական հարցում 1915-1916թթ. քաղաքականությունը վարվում էր ելնելով այն հանգամանքից, թե տվյալ պահին նշված հոսանքներից որն էր հաղթող դուրս գալիս: Մեծ մասամբ հաղթում էր հակահայկական հոսանքը, և եթե հայանպաստ հոսանքը պայքարում էր համեմատաբար արդար մեթոդներով, ապա հակահայկականը կանգ չէր առնում կեղծիքի, հերյուրանքների և վարկաբեկումների առջև: Ինչ վերաբերում է հայկական հոսանքին, ապա միջգերատեսչական պայքարում այս հոսանքի ղեկավարները հայասեր էին այնքանով, որքանով դա բխում էր Ռուսաստանի պետական, կամ էլ տվյալ անհատի նեղ անձնական շահերից: Իհարկե, հայասիրությունը հարաբերական հասկացություն էր տարբեր գերատեսչությունների համար, և այս կամ այն պետական գործչի կամ գերատեսչության հայանպաստ դիրքը պարզվում էր՝ այլ գործիչների ակնհայտ հակահայկական պահվածքի համեմատությամբ: